Տեղեկանք

ՀՀ Սյունիքի մարզի Տաթևի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի, ՀՀ Լոռու մարզի Թումանյանի խոշորացված համայնքների ներդրումային ծրագրերի վերաբերյալ

Լրացվել և ներկայացվել են համայնքներում ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող տեղական ինքնակառավարման բարեփոխումների ներդրումային ծրագրերին մասնակցելու նախնական հայտերը (Տաթևի համար USD 404,040.0, Դիլիջանի համար՝ USD 1,739,595.0, Թումանյանի համար՝ USD 331,305.0 չափով):

Այդ ծրագրերի շրջանակներում, մասնավորապես, կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

Թումանյան համայնք

1. **Վատ ճանապարհների ազդեցության նվազեցման նպատակով ձեռք կբերվի**.

մեկ բազմաֆունկցիոնալ տրակտոր և մեկ բեռնատար-ինքնաթափ

2. **Ներհամայնքային տրանսպորտային փոխադրումների հաստատման նպատակով կգնվի**

- 1 ՈՒԱԶ ուղևորատար մեքենա՝ որպես բարձր անցանելիություն ունեցող տրանսպորտային միջոց և 1 Ֆորդ Տրանզիտ
- Կկառուցվեն և կլուսավորվեն 7 ժամանակակից կանգառներ ամեն գյուղում

3. Առողջապահական ծառայությունների բարելավվման և մատչելիության բարձրացման նպատակով կգնվի

- մեկ ՈՒԱԶ մակնիշի սանիտարական մեքենա, որը կսպասարկի բոլոր 7 գյուղերին:

4. **Գյուղական բնակավայրերի պարբերական աղբահանության կազմակերպում և լանդշաֆտը աղբից մաքրելու և էկոտուրիզմի զարգացման նպատակով համայնքի համար կգնվի**

- 1 ժամանակակից աղբատար մեքենա՝ աղբի խտացման հնարավորությամբ, կտեղադրվեն աղբամաններ բոլոր գյուղերում:

5. **Մեխանիզացիայի պարկի և ծառայություններ մատուցող համապատասխան համայնքային կառույցի ստեղծման նպատակով համայնքում մեր օժանդակությամբ կստեղծվեն**

- երթուղային տրանսպորտի շահագործման կառույց, աղբահանության կազմակերպման կառույց, ինչպես նաև բոլոր մեքենաների և տրակտորների տեխնիկական սպասարկման կենտրոն:

6. Քարինջ գյուղում կկառուցվի

- մոտ 400 ք/մ ջերմոց, որում աճեցված թարմ և էկոլոգիապես մաքուր բանջարեղենը անվճար կառաքվի համայնքի բոլոր 4 մանկապարտեզներին և ծերերի խնամքի կենտրոնին:

Այս ծրագրի գործունեությունը կներառի Թումանյան խոշորացված համայնքի առանց բացառության բոլոր գյուղերը՝ Քարինջ, Մարց, Աթան, Շամուտ, Լորուտ, Ահնիձոր և իհարկե համայնքի կենտրոն հանդիսացող Թումանյան քաղաքը: Ծրագիրը էական ազդեցություն կունենա հաղորդակցության ուղիների բարելավման, երեխաների կրթության և զարգացման հնարավորությունների մեծացման, երիտասարդներին իրենց բնակավայրերի հետ կապելու, տուրիզմի զարգացման և համայնքի բարեկեցությունը բարելավելու գործում:

Դիլիջան համայնք

Դիլիջան համայնքում իրականացվելիք ծրագիրը բաղկացած է 6 կոմպոնենտից.

- Դիլիջան քաղաքի լուսավորության լապտերների փոխարինում ժամանակակից LED լույսերով, որը Դիլիջան քաղաքի բյուջեից տարեկան 16-18 մլն դրամի խնայողության կհանգեցնի:
- Հարակից 6 գյուղերում լուսավորության համակարգերի ստեղծում, ինչպես նաև լանդշաֆտի որոշ հատվածների, պատմա-ճարտարապետական օբյեկտների լուսավորություն՝ որպես տուրիզմի զարգացման և գրավչության բարձրացմանն ուղղված քայլ: Բոլոր գյուղերը կլուսավորվեն լուսադիոդային ժամանակակից եղանակով:
- Դիլիջան համայնքի բոլոր գյուղերում պարբերական աղբահանություն կազմակերպել, տեղադրել աղբամաններ, գնել աղբատար և մամլիչ մեքենաներ, բնությունը, փոքր գետերի հունները, ձորակները մաքրել աղբից: Այս միջոցառումը նույնպես ուղղված է տուրիզմի խթանմանը:
- Դիլիջան քաղաքում և 6 գյուղերում կառուցել բազմաֆունկցիոնալ լուսավորված կանգառ-առևտրի վայրեր, ուր կկայանի հասարակական և տուրիստական տրանսպորտը, իսկ կից ծածկերի տակ տեղի բնակիչները քաղաքակիրթ առևտուր կկազմակերպեն:
- Դիլիջան համայնքի տեխնիկական վերազինման նպատակով ձեռք բերել հետևյալ նշանակության տեխնիկան. Բազմաֆունկցիոնալ տրակտորներ, ինքնաթափ մեքենաներ, լույսերը սպասարկող աշտարակ-մեքենաներ, ունիվերսալ քաղաքային ձյուն մաքրող և ջրցան մեքենաներ, մաքրիչ/փոշեկուլ մեքենաներ, աղբատար մամլիչ մեքենաներ:

- Ամբողջ ձեռքբերված տեխնիկայի համար ստեղծել կայանատեղեր, սպասարկման կետ, ծառայություններ մատուցող օղակներ: Այս բաղադրիչը կձևավորի մունիցիպալիտետը՝ մեր կողմից տրամադրված տեխնիկայի հիման վրա և սեփական ուժերով:

Այս ծրագրի նպատակն է Դիլիջան համայնքը դարձնել էներգախնայող տիպական համայնք, որտեղ ամեն տարի խնայողության հետևանքով առաջացած բյուջետային միջոցները կուղղվեն նոր էներգախնայող տեխնոլոգիաների կիրառմանը և տուրիզմի խթանման նպատակով բարձրացնել համայնքի և նրա բնակավայրերի գրավչությունը՝ լուսավորելու և աղբից մաքրելու միջոցով: Շրագրի շահառուներն են համայնքի ադմինիստրացիան, բոլոր բնակիչները, առանց բացառության բոլոր գյուղերը, քանի որ որպես արդյունք ակնկալվում է համայնքում ունենալ ավելի լավ ճանապարհներ, ավելի մաքուր բնություն և գյուղեր, ավելի լուսավոր բնակավայրեր:

Տաթև համայնք

Տաթև համայնքում իրականացվող ծրագիրը հայտնի է միայն իր մեկ կոմպոնենտով՝ համայնքի տեխնիկական վերազինման մասով: Ներհամայնքային գրունտային ճանապարհները նորմալ վիճակում պահելու, ջրագծերի ընթացիկ վերանորոգում իրականացնելու և բնակչության այլ կարիքները բավարարելու նպատակով համայնքի համար կգնվի

- 1 գրեյդեր տիպի տրակտոր
- 1 բազմաֆունկցիոնալ էքսկավատոր
- 1 բեռնատար ինքնաթափ
- 2 հացահատիկ հնձող կոմբայն
- 1 աղբատար մեքենա և 150 հատ աղբամաններ

Սվարանց, Տանձատափ, Քաշունի բնակավայրերում նախատեսվում է իրականացնել խմելու ջրագծերի հիմնանորոգում: